ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 713-Ա/2 **7 մայիսի 2024 թ.**

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման ժամկետները և անցկացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Մանուկյանին՝ հաստատված ժամկետները և կարգը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարի տեղակալ Ա. Սվաջյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

713-Ա/2 հրամանի

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4-րդ դասարան

Ա Ռ Ա Ր Կ Ա	Օ Ր Ե Ր
«Մայրենի»՝ գրավոր (թեստ)	**07.06.2024 թ.**
«Մաթեմատիկա»՝ գրավոր (թեստ)	**11.06.2024 թ.**
«Ռուսաց լեզու»՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**

«Մայրենի լեզու և գրականություն»՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**

9-րդ դասարան

Ա Ռ Ա Ր Կ Ա	Օ Ր Ե Ր
«Հայոց պատմություն» /բանավոր	**քննաշրջանի ընթացքում**
«Գրականություն» /բանավոր/	**քննաշրջանի ընթացքում**
Տավուշի մարզի ուսումնական հաստատություններում՝ «Հայոց պատմություն» և «Գրականություն» /մեկ միասնական էսսե/	**20.06.2024 թ.**
«Օտար լեզու» /**«Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»,** այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր/	**քննաշրջանի ընթացքում**
«Հայոց լեզու» /գրավոր, թեստ/	**04.06.2024 թ.**
«Մաթեմատիկա» /գրավոր, թեստ/	**10.06.2024 թ**
«Բնագիտություն» /«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ՝ գրավոր, թեստ/	**17.06.2024 թ.**
«Ֆիզկուլտուրա» (ստուգարք)	**քննաշրջանի ընթացքում**

Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**
«Մայրենի լեզու և գրականություն» առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**

12-րդ դասարան

Ա Ռ Ա Ր Կ Ա	Օ Ր Ե Ր
«Հայոց լեզու և հայ գրականություն» /գրավոր/	**06.06.2024 թ.**
«Մաթեմատիկա» /գրավոր/	**12.06.2024 թ.**
«Հայոց պատմություն» /գրավոր/	**19.06.2024 թ.**
«Ռուսաց լեզու»՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**
«Մայրենի լեզու և գրականություն» առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար	**քննաշրջանի ընթացքում**
«Ֆիզկուլտուրա» (ստուգարք)	**քննաշրջանի ընթացքում**